

Դատական գործ N: ԵԿԴ/0056/01/12

Երբ է գործը ստացվել:	18-04-2012
Քրեական գործի համարը:	0056/01/12
Ինչ կարգով է գործը ստացվել:	Առաջին անգամ
Գործը որտեղից է ստացվել:	
Դատախազություն:	ՀՀ Գլխավոր դատախազություն
Նախաքննական գործի համարը:	61206411
Մեղադրական եզրակացության համառոտ բովանդակություն:	<p>Անժելա Քամարային մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա «Hackers Lodge» համացանցային ֆորումի միջոցով ծանոթացել է քննությանը դեռևս չպարզված Ռոդրիգո անունով անձնավորության հետ և իմացել, որ վերջինս հնարավորություն ունի համացանցի միջոցով ապօրինի ներթափանցելու այլ անձանց պատկանող բանկային հաշվեհամարներ և տնօրինելու դրանց հաշվեկշիռն եղած գումարները, այդ թվում նաև համացանցի միջոցով դրանք փոխանցել ավիատոմսեր գնելու նպատակով տարբեր ավիաընկերությունների հաշվեհամարներին: Դրա շուրջ վերջինիս հետ եկել է հանցավոր համաձայնության, ըստ որի պատրաստակամություն է հայտնել շուկայականից էժան գներով ավիատոմսեր գնել ցանկացող անձանցից ստանալ կանխիկ գումարներ, իսկ Ռոդրիգոն պարտավորվել է տրամադրել էլեկտրոնային ավիատոմսեր, համացանցի միջոցով ավիաընկերությանը վճարելով դրանց համար այլ անձանց բանկային հաշվեհամարներից և դրանով իսկ հափշտակելով այդ գումարները: Նշված պայմանավորվածության գալուց հանցակիցները գիտակցել են, որ միջնորդների միջոցով կատարված գործարքների ծախսողման դեպքում իրավապահ մարմինների մոտ հափշտակության կատարման համար կասկածը ընկնելու է ուղևորների վրա, իսկ օրինական քարտապանի կողմից հետգանձումային պահանջ ներկայացնելու դեպքում փոխանցված գումարները վերադարձվելու են վերջինիս, ուղևորի թշիջքի արդյունքում գոյացած ծախսերը որպես վնաս կրելու է ավիաընկերությունը:</p>
Մեղադրյալ	
Անձ	
Անուն	Անժելա
Ազգանուն	Քամարա
Հասցե	Նոր-Նորքի 2-րդ գանգվ. Մոլդովական 29/1
Ծննդյան ամսաթիվ	17-05-1982
Հոդված_1	
Հոդված	181 Մաս 2 Կետ 1
Հոդված_1	
Հոդված	184 Մաս 2 Կետ 1
Հոդված_1	
Հոդված	190 Մաս 1
Դատվածություն:	
Պաշտպան	
Անուն	
Ազգանուն	

Հասցե	
Վիճակագրական տողի համարը:	6.7
Իրեղեն ապացույց	
Երբ է ստացվել դատարան:	18-04-2012
Իրեղեն ապացույցի անվանումը:	Անժելա Քամարայի անձնագիրը, բանկային քարտը, բջջային հեռախոսը փաթեթավորված և կնքված վիճակում
Իրեղեն ապացույցի պահպանման փաստացի տեղը:	քր. գործի հետ հանձնվում է դատավորին
Խախտման միջոց:	Ստորագրություն չհեռանալու մասին
Չափահաս:	Այո
Երբ: 18-04-2012	
Նախագահող դատավոր	
Դատարանի անվանում:	Կենտրոն և Նորք-Մարաշ
Դատավորի անուն:	Գագիկ Կոլյայի Պողոսյան
Դատավոր	
Դատարանի անվանում:	Կենտրոն և Նորք-Մարաշ
Դատավորի անուն:	
Երբ: 20-04-2012	
Որոշումը ուղարկվել է կողմերին:	20-04-2012
Ուղարկվել է հուշաթերթիկ/որոշումը:	20-04-2012
Այլ նշումներ:	
Երբ: 15-05-2012	
Դատավարության կողմեր:	Մեղադրյալ
Դատավարության կողմեր:	Պաշտպան
Դատավարության կողմեր:	Մեղադրող
Դատավարության կողմեր	
Անուն	Անժելա
Ազգանուն	Քամարա
Հասցե	ք.Երևան, Նոր Նորքի 2-րդ զանգված, Մոլդովական 29/1, <Հատուկ կացարան> ՊՈԱԿ
Դատավարության կողմեր	
Անուն	Հայկ
Ազգանուն	Իսրայելյանին
Հասցե	ք.Երևան, Կորյունի փողոց, 8 շենք, բն. 5
Դատավարության կողմեր	
Անուն	Մուշեղ
Ազգանուն	Սայադյան
Հասցե	ք.Երևան, Թումանյան 34
Այլ նշումներ:	
Ժամ:	10:00
Դատավարության կողմեր	

Անուն:	<< Գլխավոր դատախազություն		
Հասցե:	ք.Երևան, Վ. Սարգսյան 5		
Նիստերի դահլիճի համարը:	1		
Նիստը:	Կայացվել է		
Պատճառը:			
Երբ:	04-06-2012		
Ժամ:	10:00		
Նիստերի դահլիճի համարը:	1		
Այլ նշումներ:			
Նիստը:	Կայացվել է		
Պատճառը:			
Երբ:	12-06-2012		
Ժամ:	10:00		
Նիստերի դահլիճի համարը:	1		
Այլ նշումներ:			
Նիստը:	Կայացվել է		
Պատճառը:			
Երբ:	13-06-2012		
Ժամ:	17:15		
Նիստերի դահլիճի համարը:	1		
Այլ նշումներ:			
Նիստը:	Կայացվել է		
Պատճառը:			
Ամսաթիվ:	14-06-2012		
Այլ նշումներ:			
Մեղադրյալ			
Անուն	Անժելա		
Ազգանուն	Քամարա		
Հասցե	<Հատուկ կացարան> ՊՈԱԿ, ք.Երևան, Նոր Նորքի 2-րդ զանգված, Մոլդեվսկյան 29/1		
Ամսաթիվ:	14-06-2012		
Առավել ծանր հանցագործության հոդված			
	Հոդված _____		
Առավել ծանր հանցագործության հոդվածով:			
Այլ հանցագործության հոդվածներ			
Հոդված	181	Մաս 2	Կետ 1
Այլ հանցագործության հոդվածներ			
Հոդված	184	Մաս 2	Կետ 1,2

Այլ հանցագործության հոդվածներ	
Հոդված	190 Մաս 1
Այլ հանցագործության հոդվածներով:	Դատապարտվել է
Հիմնական պատիժ:	Պատիժը պայմանականորեն չի նկարարվել (ՀՀ քր. օր. 70 հոդ.)
Լրացուցիչ պատիժ:	
Այլ պատժաչափեր:	
Ազատվել է պատժի կիրառումից (Հիմքը):	
Բռնագանձնված գույքի չափը:	
Դատական ակտի բովանդակությունը:	<p>ԵԿԴ/0056/01/12</p> <p>Դ Ա Տ Ա Վ Ճ Ի Ռ ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 14 հունիսի 2012թ. ք.Երևան Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանը՝</p> <p>նախագահությամբ՝ դատավոր Գ.ՊՈՂՈՍՅԱՆԻ քարտուղարությամբ՝ Ա.ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻ Ժ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ մասնակցությամբ՝ մեղադրող Ա.ԱՄԻՐՉԱԴՅԱՆԻ տուժողի ներկայացուցիչ Ա.ՍԱՅԱԴՅԱՆԻ ամբաստանյալ Ա.ՔԱՄԱՐԱՅԻ պաշտպան Հ.ԻՍՐԱՅԵԼՅԱՆԻ թարգմանիչ Ա.ՔԻՍԱՄԵԿԵՐԴԻՋԻՆԻ</p> <p>դատարանում՝ դռնբաց դատական նիստում, քննեց գործն ըստ մեղադրանքի՝ Անժելա Քամարայի՝ ծնված 27.05.1982թ. Գվինեայի Հանրապետության Էնգեռոբոռե քաղաքում, ազգությամբ գվինեացի, Գվինեայի Հանրապետության քաղաքացի, իր հայտարարությամբ՝ փաստացի ամուսնացած և վատառողջ, խնամքին 1 անձ, միջնակարգ կրթությամբ, չի աշխատում, ՀՀ-ում՝ չդատված, ժամանակավորապես բնակվում է «Հատուկ կացարան» ՊՈԱԿ-ում՝ ք.Երևան, Նոր Նորքի 2-րդ գանգված, Մոլդովական 29/1, արգելանքի տակ չէ, մեղադրվում է ՀՀ քրեական օրենսգրքի 181-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով, 184-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ կետերով և 190-րդ հոդվածի 1-ին մասով: Ամբաստանյալ Ա.Քամարային ՀՀ քրեական օրենսգրքի 181-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով, 184-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ կետերով ու 190-րդ հոդվածի 1-ին մասով մեղադր-րանք է առաջադրվել այն բանի համար, որ նա. «նա «Hacker's Lodge» համացանցային ֆորումի միջոցով ծանոթացել է քննությամբ դեռևս չպարզված Ռոդրիգո անունով անձնավորության հետ և իմացել, որ վերջինս հնարավորություն ունի համացանցի միջոցով ապօրինի ներթափանցելու այլ անձանց պատկանող բանկային հաշվեհամարներ և տնօրինելու դրանց հաշվեկշռին եղած գումարները, այդ թվում՝ նաև համացանցի միջոցով դրանք փոխանցել ավիատոմսեր գնելու նպատակով տարբեր ավիաընկերությունների հաշվեհամարներին: Դրա շուրջ վերջինիս</p>

հետ եկել է հանցավոր համաձայնության, ըստ որի պատրաստակամություն է հայտնել շուկայակա-նից էժան գներով ավիատոմսեր գնել ցանկացող անձանցից ստանալ կանխիկ գումարներ, իսկ Ռոդրիգոն պարտավորվել է տրամադրել էլեկտրոնային ավիատոմսեր, համացանցի միջոցով ավիաընկերությանը վճարելով դրանց համար այլ անձանց բանկային հաշվեհամարներից և դրանով իսկ հափշտակելով այդ գումարները: Նշված պայմանավորվածության գալուց հանցա-կիցները գիտակցել են, որ միջնորդների միջոցով կատարված գործարքների ձախողման դեպ-քում իրավապահ մարմինների մոտ հափշտակության կատարման համար կասկածն ընկնելու է ուղևորների վրա, իսկ օրինական քարտապանի կողմից հետգանձումային պահանջ ներկայաց-նելու դեպքում փոխանցված գումարները վերադարձվելու են վերջինիս, ուղևորի թշիչքի արդյուն-քում գոյացած ծախսերը որպես վնաս կրելու է ավիաընկերությունը:

Ավիատոմսերի վաճառքից հանցավոր ձանապարհով ստացված եկամուտը Ռոդրիգոյի հետ պայմանավորվել են կիսել 90:10 տոկոս հարաբերակցությամբ, Ռոդրիգոյին հասանելիք 90 տոկոսի չափով փայաբաժինը իրավապահ մարմինների տեսադաշտից թաքցնելու համար և դրանով իսկ դրա հանցավոր ծագումը խեղաթյուրելու նպատակով Անժելա Քամարան համա-ձայնվել է փոխանցել «Լիբերտի ռեզերվ» էլեկտրոնային վճարային համակարգում իր հաշվե-համարին եղած գումարներից Ռոդրիգոյի հաշվեհամարին, իսկ հաճախորդներից կանխիկ ստացված գումարները թողնել իրեն: Ըստ այդ պայմանավորվածության, Թանգանիայում մի քանի նմանատիպ ապօրինի գոր-ծարք կատարելուց հետո Անժելա Քամարան 2011 թվականի օգոստոսի 7-ին ժամանել է Հա-յաստանի Հանրապետություն և այստեղ շարունակել է այդ գործունեությունը՝ ըստ վերոհիշյալ պայմանավորվածության:

Մասնավորապես, նա պարտավորվել է ձևակերպել ավիատոմս դեպի Մոսկվա՝ Տիգրան Մուրադյանի համար, ստացել է վերջինիս անձնագրային տվյալները և 150 ԱՄՆ դոլար, իսկ հանցակիցը համացանցի միջոցով Տիգրան Մկրտչյանի անվամբ 17.08.2011թ. ձևակերպել է Երևան-Մոսկվա 18.08.2011թ. №906 չվերթի էլեկտրոնային ավիատոմսը, «Սիբիր» ավիաընկերությանը կատարելով 179239 ՀՀ դրամին համարժեք 14025 ՌԴ ռուբլի չափով վճարում ԱՄՆ-ում գործող «AMERICAN EXPRESS US CARS» բանկի հաճախորդի հաշվեհամարից՝ «American Express» տեսակի 378293993222103 համարի բանկային քարտի օգտագործմամբ, դրանով իսկ հափշտակելով այդ գումարը:

Բացի դրանից, Անժելա Քամարան պարտավորվել է ձևակերպել ավիատոմս դեպի Սանկտ-Պետերբուրգ՝ Սերգեյ Աբգարյանի համար, ստացել է վերջինիս անձնագրային տվյալ-ները և 109000 դրամ, իսկ հանցակիցը համացանցի միջոցով Սերգեյ Աբգարյանի անվամբ 19.08.2011թ. ձևակերպել է Երևան-Մոսկվա-Սանկտ-Պետերբուրգ 24.08.2011թ. №908 և №0039 չվերթների էլեկտրոնային ավիատոմսը՝ «Սիբիր» ավիաընկերությանը կատարելով 252841 ՀՀ դրամին համարժեք 20195 ՌԴ ռուբլի չափով վճարում ԱՄՆ-ում գործող «AMERICAN EXPRESS US CARS» հաճախորդի հաշվեհամարից՝ «American Express» տեսակի 378293993222103 հա-մարի բանկային քարտի օգտագործմամբ, դրանով իսկ հափշտակելով այդ գումարը:

Բացի դրանից, Անժելա Քամարան պարտավորվել է ձևակերպել ավիատոմս դեպի Մոսկ-վա Տիգրան Առաքելովի համար, ստացել է վերջինիս անձնագրային տվյալները և 150 ԱՄՆ դո-լար, իսկ հանցակիցը համացանցի միջոցով Տիգրան Առաքելովի անվամբ 30.08.2011թ. ձևա-կերպել է Երևան-Մոսկվա 01.09.2011թ. №906 չվերթի էլեկտրոնային ավիատոմսը՝ «Սիբիր» ավիաընկերությանը կատարելով 117471 ՀՀ դրամին համարժեք 9242.42 ՌԴ ռուբլի չափով վճա-րում ԱՄՆ-ում գործող «AMERICAN EXPRESS US CARS» հաճախորդի հաշվեհամարից՝ «American Express» տեսակի 378293993222103 համարի բանկային քարտի օգտագործմամբ,

դրանով իսկ հափշտակելով այդ գումարը:

Բացի դրանից, Անժելա Քամարան պարտավորվել է ձևակերպել ավիատոմս դեպի Երևան Սարգիս Մամյանի համար, ստացել է վերջինիս անձնագրային տվյալները, իսկ հան-ցակիցը համացանցի միջոցով Սարգիս Մամյանի անվամբ 31.08.2011թ. ձևակերպել է Մոսկվա-Երևան 02.09.2011թ. №907 չվերթի էլեկտրոնային ավիատոմսը՝ «Սիբիր» ավիաընկերությանը կատարելով 77124 ՀՀ դրամին համարժեք 6068 ՌԴ ռուբլի չափով վճարում ԱՄՆ-ում գործող «AMERICAN EXPRESS US CARS» հաճախորդի հաշվեհամարից՝ «American Express» տեսակի 378293993222103 համարի բանկային քարտի օգտագործմամբ, դրանով իսկ հափշտակելով այդ գումարը:

Բացի դրանից, Անժելա Քամարան պարտավորվել է ձևակերպել Երևան-Մոսկվա-Երևան չվերթների ավիատոմս Գրիգոր Գրիգորյանի համար, ստացել է վերջինիս անձնագրային տվյալ-ները, իսկ հանցակիցը համացանցի միջոցով Գրիգոր Գրիգորյանի անվամբ 03.09.2011թ. ձև-կերպել է Երևան-Մոսկվա 06.09.2011թ. №908 չվերթի և Մոսկվա-Երևան 11.09.2011թ. №907 չվերթի էլեկտրոնային ավիատոմսը՝ «Սիբիր» ավիաընկերությանը կատարելով 193860 ՀՀ դրամին համարժեք 15276,6 ՌԴ ռուբլի չափով վճարում Հարավ-Աֆրիկյան Հանրապետությունում գործող «NEDBANK» բանկի հաճախորդի հաշվեհամարից՝ «American Express» տեսակի 377094000040319 համարի բանկային քարտի օգտագործմամբ, դրանով իսկ հափշտակելով այդ գումարը, սակայն հանցանքը ավարտին չի հասցվել, քանի որ ուղևորը հրաժարվել է չվերթից, իսկ ավիատոմսի համար վճարված գումարն ըստ օրինական քարտապանի ներկայացված հետ-զանձումային պահանջի վերադարձվել է վերջինիս հաշվեհամարին:

Բացի դրանից, Անժելա Քամարան պարտավորվել է ձևակերպել ավիատոմս դեպի Մոսկվա Հովիկ Գևորգյանի համար, ստացել է վերջինիս անձնագրային տվյալները և 75000 ՀՀ դրամ, իսկ հանցակիցը համացանցի միջոցով Հովիկ Գևորգյանի անվամբ 07.09.2011թ. ձևակերպել է Երևան-Մոսկվա 09.09.2011թ. №906 չվերթի էլեկտրոնային ավիատոմսը՝ «Սիբիր» ավիաընկերությանը կատարելով 116360 ՀՀ դրամին համարժեք 9249.6 ՌԴ ռուբլի չափով վճարում Հարավ-Աֆրիկյան Հանրապետությունում գործող «NEDBANK» բանկի հաճախորդի հաշվեհամարից՝ «American Express» տեսակի 377094000040319 համարի բանկային քարտի օգտագործմամբ, դրանով իսկ հափշտակելով այդ գումարը:

Բացի դրանից, Անժելա Քամարան պարտավորվել է ձևակերպել ավիատոմս դեպի Մոսկվա Կարո Ադամյանի համար, ստացել է վերջինիս անձնագրային տվյալները և 85000 ՀՀ դրամ, իսկ հանցակիցը համացանցի միջոցով Կարո Ադամյանի անվամբ 06.09.2011թ. ձևակերպել է Երևան-Մոսկվա 08.09.2011թ. №906 չվերթի էլեկտրոնային ավիատոմսը՝ «Սիբիր» ավիաընկերությանը կատարելով 115989 ՀՀ դրամին համարժեք 9249.6 ՌԴ ռուբլի չափով վճարում Հարավ-Աֆրիկյան Հանրապետությունում գործող «NEDBANK» բանկի հաճախորդի հաշվեհամարից՝ «American Express» տեսակի 377094000040319 համարի բանկային քարտի օգտագործմամբ, դրանով իսկ հափշտակելով այդ գումարը:

Բացի դրանից, Անժելա Քամարան պարտավորվել է ձևակերպել ավիատոմս դեպի Մոսկվա Անդրանիկ Մկրտչյանի համար, ստացել է վերջինիս անձնագրային տվյալները և 75000 ՀՀ դրամ, իսկ հանցակիցը համացանցի միջոցով Անդրանիկ Մկրտչյանի անվամբ 07.09.2011թ. ձև-կերպել է Երևան-Մոսկվա 09.09.2011թ. №906 չվերթի էլեկտրոնային ավիատոմսը՝ «Սիբիր» ավիաընկերությանը կատարելով 116359 ՀՀ դրամին համարժեք 9249.6 ՌԴ ռուբլի չափով վճարում Հարավ-Աֆրիկյան Հանրապետությունում գործող «NEDBANK» բանկի հաճախորդի հաշվեհամարից՝ «American Express» տեսակի 377094000040319 համարի բանկային քարտի օգտագործմամբ, դրանով իսկ հափշտակելով այդ գումարը:

Բացի դրանից, Անժելա Քամարան պարտավորվել է ձևակերպել

ավիատոմս դեպի Մոսկվա Աշոտ Իսախրյանի համար, ստացել է վերջինիս անձնագրային տվյալները, իսկ հանցակիցը համացանցի միջոցով Աշոտ Իսախրյանի անվամբ 09.09.2011թ. ձևակերպել է Երևան-Մոսկվա 11.09.2011թ. №906 չվերթի էլեկտրոնային ավիատոմսը, «Սիբիր» ավիաընկերությանը կատարելով 123889 ՀՀ դրամին համարժեք 9895.35 ՌԴ ռուբլի չափով վճարում Հարավ-Աֆրիկյան Հանրապետությունում գործող «NEDBANK» բանկի հաճախորդի հաշվեհամարից՝ «American Express» տեսակի 377094000040319 համարի բանկային քարտի օգտագործմամբ, դրանով իսկ հափշտակելով այդ գումարը:

Բացի դրանից, Անժելա Քամարան պարտավորվել է ձևակերպել ավիատոմս դեպի Դոնի Ռոստով Իրինա Կասպարովայի համար, ստացել է վերջինիս անձնագրային տվյալները, իսկ հանցակիցը համացանցի միջոցով Իրինա Կասպարովայի անվամբ 10.09.2011թ. ձևակերպել է Երևան-Մոսկվա 12.09.2011թ. №906 և Մոսկվա-Դոնի Ռոստով 12.09.2011թ. №1159 չվերթների էլեկտրոնային ավիատոմսը՝ «Սիբիր» ավիաընկերությանը կատարելով 210319 ՀՀ դրամին համարժեք 16798,72 ՌԴ ռուբլի չափով վճարում Հարավ-Աֆրիկյան Հանրապետությունում գործող «NEDBANK» բանկի հաճախորդի հաշվեհամարից՝ «American Express» տեսակի 377094000040319 համարի բանկային քարտի օգտագործմամբ, դրանով իսկ հափշտակելով այդ գումարը, սակայն հանցանքը ավարտին չի հասցվել, քանի որ ուղևորը հրաժարվել է չվերթից, իսկ ավիատոմսի համար վճարված գումարն ըստ օրինական քարտապանի ներկայացված հետ-գանձումային պահանջի վերադարձվել է վերջինիս հաշվեհամարին:

Բացի դրանից, Անժելա Քամարան պարտավորվել է ձևակերպել ավիատոմս դեպի Մոսկվա Վարուժան Սահակյանի համար, ստացել է վերջինիս անձնագրային տվյալները և 60000 ՀՀ դրամ, իսկ հանցակիցը համացանցի միջոցով Վարուժան Սահակյանի անվամբ 14.09.2011թ. ձևակերպել է Երևան-Մոսկվա 16.09.2011թ. №908 չվերթի էլեկտրոնային ավիա-տոմսը՝ «Սիբիր» ավիաընկերությանը կատարելով 94484 ՀՀ դրամին համարժեք 7650.60 ՌԴ ռուբլի չափով վճարում Հարավ-Աֆրիկյան Հանրապետությունում գործող «NEDBANK» բանկի հաճախորդի հաշվեհամարից՝ «American Express» տեսակի 377094000040319 համարի բանկային քարտի օգտագործմամբ, դրանով իսկ հափշտակելով այդ գումարը:

Բացի դրանից, Անժելա Քամարան պարտավորվել է ձևակերպել ավիատոմս դեպի Մոսկվա Աշոտ Խաչատրյանի համար, ստացել է վերջինիս անձնագրային տվյալները և 60000 ՀՀ դրամ, իսկ հանցակիցը համացանցի միջոցով Աշոտ Խաչատրյանի անվամբ 16.09.2011թ. ձևակերպել է Երևան-Մոսկվա 20.09.2011թ. №906 չվերթի էլեկտրոնային ավիատոմսը՝ «Սիբիր» ավիաընկերությանը կատարելով 94025 ՀՀ դրամին համարժեք 7650.6 ՌԴ ռուբլի չափով վճարում Հարավ-Աֆրիկյան Հանրապետությունում գործող «NEDBANK» բանկի հաճախորդի հաշվեհամարից՝ «American Express» տեսակի 377094000040319 համարի բանկային քարտի օգտագործմամբ, դրանով իսկ հափշտակելով այդ գումարը:

Բացի դրանից, Անժելա Քամարան պարտավորվել է ձևակերպել ավիատոմս դեպի Ռոստով Արսեն Օհանյանի համար, ստացել է վերջինիս անձնագրային տվյալները, իսկ հանցակիցը համացանցի միջոցով Արսեն Օհանյանի անվամբ 19.09.2011թ. ձևակերպել է Երևան-Մոսկվա 21.09.2011թ. №908 և Մոսկվա-Դոնի Ռոստով 21.09.2011թ. №0031 չվերթների էլեկտրոնային ավիատոմսը՝ «Սիբիր» ավիաընկերությանը կատարելով 110581 ՀՀ դրամին համարժեք 9116,35 ՌԴ ռուբլի չափով վճարում Հարավ-Աֆրիկյան Հանրապետությունում գործող «NEDBANK» բանկի հաճախորդի հաշվեհամարից՝ «American Express» տեսակի 377094000040319 համարի բանկային քարտի օգտագործմամբ, դրանով իսկ հափշտակելով այդ գումարը:

Բացի դրանից, Անժելա Քամարան պարտավորվել է ձևակերպել ավիատոմս դեպի Սոչի Գևորգ Գրիգորյանի համար, ստացել է

վերջինիս անձնագրային տվյալները և 75000 ՀՀ դրամ, իսկ հանցակիցը համացանցի միջոցով Գևորգ Գրիգորյանի անվամբ 20.09.2011թ. ձևակերպել է Երևան-Մոսկվա 22.09.2011թ. №906 չվերթի էլեկտրոնային ավիատոմսը՝ «Սիբիր» ավիաընկերությանը կատարելով 91118 ՀՀ դրամին համարժեք 7650.60 ՌԴ ռուբլի չափով վճարում Հարավ-Աֆրիկյան Հանրապետությունում գործող «NEDBANK» բանկի հաճախորդի հաշվեհամարից՝ «American Express» տեսակի 377094000040319 համարի բանկային քարտի օգտագործմամբ, դրանով իսկ հափշտակելով այդ գումարը: Բացի դրանից, Անժելա Քամարան պարտավորվել է ձևակերպել ավիատոմս դեպի Մոսկվա Արմեն Հովհաննիսյանի համար, ստացել է վերջինիս անձնագրային տվյալները և 200 ԱՄՆ դոլար, իսկ հանցակիցը համացանցի միջոցով Արմեն Հովհաննիսյանի անվամբ 23.09.2011թ. ձևակերպել է Երևան-Մոսկվա 26.09.2011թ. №908 չվերթի էլեկտրոնային ավիա-տոմսը՝ «Սիբիր» ավիաընկերությանը կատարելով 92341 ՀՀ դրամին համարժեք 7926.32 ՌԴ ռուբլի չափով վճարում Հարավ-Աֆրիկյան Հանրապետությունում գործող «NEDBANK» բանկի հաճախորդի հաշվեհամարից՝ «American Express» տեսակի 377094000040319 համարի բանկային քարտի օգտագործմամբ, դրանով իսկ հափշտակելով այդ գումարը: Բացի դրանից, Անժելա Քամարան պարտավորվել է ձևակերպել ավիատոմսեր դեպի Ռոստով Արսեն Տերտերյանի և դեպի Մոսկվա վերջինիս մոր՝ Տատյանա Տերտերյանի համար, ստացել է վերջիններիս անձնագրային տվյալները և 140000 ՀՀ դրամ, իսկ հանցակիցը համա-ցանցի միջոցով Արսեն Արսեն Տերտերյանի անվամբ 24.09.2011թ. ձևակերպել է Երևան-Մոսկվա 26.09.2011թ. №906 և Մոսկվա-Ռոստով 26.09.2011թ. №1159 չվերթների էլեկտրոնային ավիա-տոմսը՝ «Սիբիր» ավիաընկերությանը կատարելով 117478 ՀՀ դրամին համարժեք 10083.95 ՌԴ ռուբլի չափով վճարում Հարավ-Աֆրիկյան Հանրապետությունում գործող «NEDBANK» բանկի հաճախորդի հաշվեհամարից՝ «American Express» տեսակի 377094000040319 համարի բանկային քարտի օգտագործմամբ, դրանով իսկ հափշտակելով այդ գումարը: Միաժամանակ Տատյանա Տերտերյանի անվամբ հանցակիցը 24.09.2011թ. ձևակերպել է Երևան-Մոսկվա 26.09.2011թ. №906 չվերթի էլեկտրոնային ավիատոմսը՝ «Սիբիր» ավիաընկերությանը կատարելով 92341 ՀՀ դրամին համարժեք 7926.32 ՌԴ ռուբլի չափով վճարում նույն բանկային քարտի օգտագործմամբ, դրանով իսկ հափշտակելով այդ գումարը: Բացի դրանից, Անժելա Քամարան պարտավորվել է ձևակերպել ավիատոմս դեպի Մոսկվա Համեստ Մինասյանի համար, ստացել է վերջինիս անձնագրային տվյալները, իսկ հանցակիցը համացանցի միջոցով Համեստ Մինասյանի անվամբ 24.09.2011թ. ձևակերպել է Երևան-Մոսկվա 27.09.2011թ. №908 չվերթի էլեկտրոնային ավիատոմսը՝ «Սիբիր» ավիաընկերությանը կատարելով 97476 ՀՀ դրամին համարժեք 8367,08 ՌԴ ռուբլի չափով վճարում Հարավ-Աֆրիկյան Հանրապետությունում գործող «NEDBANK» բանկի հաճախորդի հաշվեհամարից՝ «American Express» տեսակի 377094000040319 համարի բանկային քարտի օգտագործմամբ, դրանով իսկ հափշտակելով այդ գումարը: Բացի դրանից, Անժելա Քամարան պարտավորվել է ձևակերպել ավիատոմս դեպի Մոսկվա Հովհաննես Նաջարյանի համար, ստացել է վերջինիս անձնագրային տվյալները, իսկ հանցակիցը համացանցի միջոցով Հովհաննես Նաջարյանի անվամբ 24.09.2011թ. ձևակերպել է Երևան-Մոսկվա 25.09.2011թ. №906 չվերթի էլեկտրոնային ավիատոմսը՝ «Սիբիր» ավիաընկերությանը կատարելով 110313 ՀՀ դրամին համարժեք 9468,95 ՌԴ ռուբլի չափով վճարում Հարավ-Աֆրիկյան Հանրապետությունում գործող «NEDBANK» բանկի հաճախորդի հաշվեհամարից՝ «American Express» տեսակի 377094000040319 համարի բանկային քարտի օգտագործմամբ, դրանով իսկ հափշտակելով այդ գումարը: Բացի դրանից, Անժելա Քամարան պարտավորվել է ձևակերպել

ավիատոմս դեպի Մոսկվա Մարտին Թաթարյանի համար, ստացել է վերջինիս անձնագրային տվյալները և 60000 ՀՀ դրամ, իսկ հանցակիցը համացանցի միջոցով Մարտին Թաթարյանի անվամբ 30.09.2011թ. ձևակերպել է Երևան-Մոսկվա 10.10.2011թ. №908 չվերթի էլեկտրոնային ավիատոմսը՝ «Սիբիր» ավիաընկերությանը կատարելով 94073 ՀՀ դրամին համարժեք 8109.8 ՌԴ ռուբլի չափով վճարում Հարավ-Աֆրիկյան Հանրապետությունում գործող «NEDBANK» բանկի հաճախորդի հաշվեհամարից՝ «American Express» տեսակի 377094000040319 համարի բանկային քարտի օգտագործմամբ, դրանով իսկ հափշտակելով այդ գումարը: Բացի դրանից, Անժելա Քամարան պարտավորվել է ձևակերպել ավիատոմս դեպի Մոսկվա Նարեկ Միքայելյանի համար, ստացել է վերջինիս անձնագրային տվյալները և 60000 ՀՀ դրամ, իսկ հանցակիցը համացանցի միջոցով Նարեկ Միքայելյանի անվամբ 01.10.2011թ. ձևակերպել է Երևան-Մոսկվա 07.10.2011թ. №906 չվերթի էլեկտրոնային ավիատոմսը՝ «Սիբիր» ավիաընկերությանը կատարելով 94501 ՀՀ դրամին համարժեք 8146.7 ՌԴ ռուբլի չափով վճարում Հարավ-Աֆրիկյան Հանրապետությունում գործող «NEDBANK» բանկի հաճախորդի հաշվեհամարից՝ «American Express» տեսակի 377094000040319 համարի բանկային քարտի օգտագործմամբ, դրանով իսկ հափշտակելով այդ գումարը: Բացի դրանից, Անժելա Քամարան պարտավորվել է ձևակերպել Երևան-Մոսկվա-Երևան չվերթների ավիատոմսեր Դոնարա Աբրահամյանի համար, ստացել է վերջինիս անձնագրային տվյալները, իսկ հանցակիցը համացանցի միջոցով Դոնարա Աբրահամյանի անվամբ 06.10.2011թ. ձևակերպել է Երևան-Մոսկվա 08.11.2011թ. №908 և Մոսկվա-Երևան 16.11.2011թ. №905 չվերթների էլեկտրոնային ավիատոմսը՝ «Սիբիր» ավիաընկերությանը կատարելով 165412 ՀՀ դրամին համարժեք 14296.7 ՌԴ ռուբլի չափով վճարում Հարավ-Աֆրիկյան Հանրապետությունում գործող «NEDBANK» բանկի հաճախորդի հաշվեհամարից՝ «American Express» տեսակի 377094000040319 համարի բանկային քարտի օգտագործմամբ, դրանով իսկ հափշտակելով այդ գումարը, սակայն հանցանքը ավարտին չի հասցվել, քանի որ ուղևորը հրաժարվել է չվերթից, իսկ ավիատոմսի համար վճարված գումարն ըստ օրինական քարտապանի ներկա-յացված հետզանձումային պահանջի վերադարձվել է վերջինիս հաշվեհամարին: Բացի դրանից, Անժելա Քամարան պարտավորվել է ձևակերպել Մոսկվա-Երևան-Մոսկվա չվերթների ավիատոմս Մադելեյն Դեգոյանի համար, ստացել է վերջինիս անձնագրային տվյալները, իսկ հանցակիցը համացանցի միջոցով Մադելեյն Դեգոյանի անվամբ 07.10.2011թ. ձևակերպել է Մոսկվա-Երևան 09.10.2011թ. №907 չվերթի և Երևան-Մոսկվա 15.10.2011թ. №906 չվերթի էլեկտրոնային ավիատոմսը՝ «Սիբիր» ավիաընկերությանը կատարելով 171603 ՀՀ դրամին համարժեք 14742,58 ՌԴ ռուբլի չափով վճարում Հարավ-Աֆրիկյան Հանրապետությունում գործող «NEDBANK» բանկի հաճախորդի հաշվեհամարից՝ «American Express» տեսակի 377094000040319 համարի բանկային քարտի օգտագործմամբ, դրանով իսկ հափշտակելով այդ գումարը, սակայն հանցանքը ավարտին չի հասցվել, քանի որ ուղևորը հրաժարվել է չվերթից, իսկ ավիատոմսի համար վճարված գումարն ըստ օրինական քարտապանի ներկայացված հետ-զանձումային պահանջի վերադարձվել է վերջինիս հաշվեհամարին: Բացի դրանից, Անժելա Քամարան պարտավորվել է ձևակերպել ավիատոմս դեպի Մոսկվա Նորայր Խաչատրյանի և Կարեն Ամատունյանի համար, ստացել է վերջիններիս անձնագրային տվյալները և 120000 ՀՀ դրամ, իսկ հանցակիցը համացանցի միջոցով նրանց անվամբ 10.10.2011թ. ձևակերպել է Երևան-Մոսկվա 16.10.2011թ. №908 չվերթի էլեկտրոնային ավիատոմսերը՝ «Սիբիր» ավիաընկերությանը կատարելով 281986 ՀՀ դրամին համարժեք 24163.35 ՌԴ ռուբլի չափով վճարում Հարավ-Աֆրիկյան Հանրապետությունում գործող «NEDBANK» բանկի հաճախորդի

հաշվեհամարից՝ «American Express» տեսակի 377094000040319 համարի բանկային քարտի օգտագործմամբ, դրանով իսկ հափշտակելով այդ գումարը:

Բացի դրանից, Անժելա Քամարան պարտավորվել է ձևակերպել ավիատոմս դեպի Սոչի մայր և դուստր Կարինե Էվինյանի և Այուզաննա Վարդանյանի համար, ստացել է վերջիններիս անձնագրային տվյալները, իսկ հանցակիցը համացանցի միջոցով նրանց անվամբ 01.11.2011թ. ձևակերպել է Երևան-Մոսկվա 06.11.2011թ. №908 չվերթի և Մոսկվա-Սոչի 06.11.2011թ. №1023 չվերթի էլեկտրոնային ավիատոմսերը՝ «Սիբիր» ավիաընկերությանը կատարելով 323255 ՀՀ դրամին համարժեք 26217 ՌԴ ռուբլի չափով վճարում Հարավ-Աֆրիկյան Հանրապետությունում գործող «NEDBANK» բանկի հաճախորդի հաշվեհամարից՝ «American Express» տեսակի 377093000119123 համարի բանկային քարտի օգտագործմամբ, դրանով իսկ հափշտակելով այդ գումարը, սակայն հանցանքը ավարտին չի հասցվել, քանի որ ուղևորները հրաժարվել են չվերթից, իսկ ավիատոմսի համար վճարված գումարն ըստ օրինական քարտապանի ներկա-յացված հետզանձումային պահանջի վերադարձվել է վերջինիս հաշվեհամարին:

Բացի դրանից, Անժելա Քամարան պարտավորվել է ձևակերպել ավիատոմս դեպի Երևան Ռաֆայել Փարվանյանի համար, ստացել է վերջինիս անձնագրային տվյալները, իսկ հանցակիցը համացանցի միջոցով նրա անվամբ 02.11.2011թ. ձևակերպել է Մոսկվա-Երևան 10.12.2011թ. №907 չվերթի էլեկտրոնային ավիատոմսը՝ «Սիբիր» ավիաընկերությանը կատարելով 81332 ՀՀ դրամին համարժեք 6575 ՌԴ ռուբլի չափով վճարում Հարավ-Աֆրիկյան Հանրապետությունում գործող «NEDBANK» բանկի հաճախորդի հաշվեհամարից՝ «American Express» տեսակի 377093000119123 համարի բանկային քարտի օգտագործմամբ, դրանով իսկ հափշտակելով այդ գումարը, սակայն հանցանքը ավարտին չի հասցվել, քանի որ ուղևորը հրաժարվել է չվերթից, իսկ ավիատոմսի համար վճարված գումարն ըստ օրինական քարտապանի ներկայացված հետզանձումային պահանջի վերադարձվել է վերջինիս հաշվեհամարին:

Բացի դրանից, Անժելա Քամարան պարտավորվել է ձևակերպել ավիատոմս դեպի Մոսկվա Մկրտիչ Ալեքսանյանի համար, ստացել է վերջինիս անձնագրային տվյալները, 100 ԱՄՆ դոլար և 26250 ՀՀ դրամ, իսկ հանցակիցը համացանցի միջոցով նրա անվամբ 01.11.2011թ. ձևակերպել է Երևան-Մոսկվա 03.11.2011թ. №908 չվերթի էլեկտրոնային ավիատոմսերը՝ «Սիբիր» ավիաընկերությանը կատարելով 100514 ՀՀ դրամին համարժեք 8152 ՌԴ ռուբլի չափով վճարում Հարավ-Աֆրիկյան Հանրապետությունում գործող «NEDBANK» բանկի հաճախորդի հաշվեհամարից՝ «American Express» տեսակի 377093000119123 համարի բանկային քարտի օգտագործմամբ, դրանով իսկ հափշտակելով այդ գումարը, սակայն հանցանքը ավարտին չի հասցվել, քանի որ ուղևորը հանվել է չվերթից «Զվարթնոց» օդանավակայանում իրավապահ մարմինների կողմից, իսկ ավիատոմսի համար վճարված գումարն ըստ օրինական քարտապանի ներկայացված հետզանձումային պահանջի վերադարձվել է վերջինիս հաշվեհամարին:

Հայաստանի քաղաքացիներին նրա տրամադրած ավիատոմսերի դիմաց վճարումը կատարվել է Կենիայում, Տանզանիայում և ԱՄՆ-ում գրանցված պրովայդերների IP-հասցեներից, այնուհետև Անժելա Քամարայի և վերջինիս հանցակցի կողմից ավիատոմսերի վաճառքի հետ կապված և խաբեության եղանակով կատարված վերոհիշյալ բոլոր գործարքների կապակցությամբ քարտապանների կողմից ներկայացվել են հետզանձումային պահանջներ, որի հետևանքով «Սիբիր» ավիաընկերությանը պատճառվել է առնվազն 2469989 ՀՀ դրամին համարժեք 203435.25 ՌԴ ռուբլու չափով վնաս:

Չունենալով Հայաստանում որևիցե աշխատանք և վաստակելով գումարներ վերոհիշյալ զեղծարարությունների եղանակով, Անժելա Քամարան հանցավոր ճանապարհով ստացված եկամուտներն

թաքցնելու, դրանց ծագման աղբյուրը խեղաթյուրելու և շրջանառության մեջ դնելու նպատակով 05.10.2011թ. «Բիբլոս բանկ Արմենիա» ՓԲ ընկերության «Ամիրյան» մասնա-ձյուղում բացել է հաշվեհամար, որպես դրա նախատեսվող տարեկան շրջանառություն նշելով 70000 ԱՄՆ դոլարը: Հաշվի բացման մասին և հաշվեհամարի տվյալները SMS-հաղորդագրու-թյամբ հայտնել է հանցակցին, այնուհետև նույն օրը փոխանցման եղանակով այդ հաշվեհա-մարին մուտքագրել է հանցավոր ճանապարհով ստացված եկամուտներից 38982 ՀՀ դրամին համարժեք 100 ԱՄՆ դոլար, 2011 թվականի հոկտեմբերի 25-ին մուտքագրել է 12935 ՀՀ դրամին համարժեք 34.26 ԱՄՆ դոլար, իսկ 2011 թվականի նոյեմբերի 2-ին մուտքագրել է ուղևորներից մեկի՝ Մկրտիչ Ալեքսանյանից հանցավոր ճանապարհով ստացված եկամուտը՝ 17052 ՀՀ դրամ-ին համարժեք 45 ԱՄՆ դոլարը, դրամով իսկ թաքցնելով դրանք և խաղաթյուրելով դրանց ծագ-ման աղբյուրը: 2011 թվականի հոկտեմբերի 5-ից մինչև նոյեմբերի 2-ն ընկած ժամանակահատ-վածում հաշվեհամարին մուտքագրված 179.26 ԱՄՆ դոլարից 111.93 ԱՄՆ դոլարը կանխիկաց-րել է կամ փոխանցել է՝ որպես վճարում տարբեր ծառայությունների համար: Բացի դրանից, հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների մի մասը «Մանի գրամ» միջազգային վճարային համակարգով մի քանի դեպքով փոխանցել է Կենիա և Նիգերիա, դրա-նով իսկ թաքցնելով դրանք և խաղաթյուրելով դրանց հանցավոր ծագումը: Մասնավորապես, Անժելա Քամարան «ԿՏԲ-Հայաստան բանկ» ՓԲ ընկերության կողմից սպասարկվող «Մանի գրամ» միջազգային վճարային համակարգի միջոցով Կենիայում գտնվող Դավիթ Քամարային 2011 թվականի սեպտեմբերի 1-ին փոխանցել է 29400 ՀՀ դրամին համարժեք 80 ԱՄՆ դոլար, սեպտեմբերի 26-ին փոխանցել է 37176 ՀՀ դրամին համարժեք 100 ԱՄՆ դոլար, հոկտեմբերի 25-ին փոխանցել է 37757 ՀՀ դրամին համարժեք 100 ԱՄՆ դոլար, իսկ նոյեմբերի 2-ին՝ 37894 ՀՀ դրամին համարժեք 100 ԱՄՆ դոլար: Դրա հետ մեկտեղ նույն բանկից «Մանի գրամ» վճարային համակարգով 2011 թվականի հոկտեմբերի 7-ին Նիգերիայում գտնվող Դան Ջոսեֆ Օգորին փոխանցել է 26257 ՀՀ դրամին համարժեք 70 ԱՄՆ դոլար»:

Ամբաստանյալ Ա.Քամարան մինչև դատաքննությունն սկսվելը միջնորդեց կիրառել արա-գացված դատական քննության կարգ ու հայտարարեց, որ միջնորդությունը ներկայացնում է կամավոր՝ իր պաշտպանի հետ խորհրդակցելուց հետո, առաջադրված մեղադրանքն իրեն պարզ է, համաձայն է մեղադրանքի հետ, առաջադրված մեղադրանքում իրեն լիովին մեղավոր է ճա-նաչում և զիտակցում է արագացված կարգով դատական քննություն անցկացնելու հետևանք-ները:

Դատարանի որոշմամբ ամբաստանյալի միջնորդությունը բավարարվել և դատական քննությունն անցկացվել է արագացված կարգով:

Դատարանը, հաշվի առնելով առաջադրված մեղադրանքի հետ ամբաստանյալի համա-ձայն լինելու հանգամանքն ու հանգելով եզրակացության, որ մեղադրանքը, որի հետ համա-ձայնվեց ամբաստանյալը, հիմնավորված է և հաստատվում է քրեական գործով հավաքված ապացույցներով, գտնում է, որ ամբաստանյալ Ա.Քամարան կատարել է հանցանքներ՝ նախա-տեսված ՀՀ քրեական օրենսգրքի 181-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով, 184-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ կետերով ու 190-րդ հոդվածի 1-ին մասով, որոնցով և նա պետք է պատասխա-նատվության ենթարկվի: Ամբաստանյալի նկատմամբ պատիժ նշանակելիս՝ պատիժների տեսակն ու չափը որո-շելիս, դատարանը հաշվի է առնում ինչպես նրա կատարած արարքների բնույթը և հանրության համար վտանգավորության աստիճանը, այնպես էլ արագացված կարգով անցկացված դատա-քննության ընթացքում ուսումնասիրված՝ նրա անձը բնութագրող տվյալներն ու պատասխանա-տրվությունը և պատիժը մեղմացնող ու ծանրացնող հանգամանքները:

Որպես ամբաստանյալ Ա.Քամարայի պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանքներ՝ դատարանը հաշվի է առնում, որ նա համաձայնվեց մեղադրանքի հետ և ան-կեղծորեն զոջաց կատարած հանցանքների համար, ու որ նրա խնամքին է գտնվում մինչև 14 տարեկան երեխան:

Դատարանը, հաշվի առնելով ՀՀ քրեական օրենսգրքի 181-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով կատարած հանցագործության հանրության համար վտանգավորության աստիճանը, գտնում է, որ նշված հանցագործության համար նախատեսված պատիժներից նվազ խիստ տե-սակը չի կարող ապահովել պատժի նպատակները, և ամբաստանյալը պետք է դատապարտվի ազատազրկման:

Դատարանը, նկատի ունենալով ամբաստանյալ Ա.Քամարայի անձը բնութագրող տվյալ-ները, նրա պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանքները, պատասխա-նատվությունն ու պատիժը ծանրացնող հանգամանքների բացակայությունը, հաշվի առնելով, որ ամբաստանյալը ՀՀ քաղաքացի չէ, ՀՀ-ում նա է իր մանկահասակ երեխայի միակ խնամողը և, ելնելով ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ ու 61-րդ հոդվածներով սահմանված արդարության, պա-տասխանատվության անհատականացման և պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքներից, հանգում է հետևության, որ ամբաստանյալ Ա.Քամարայի ուղղվելը հնարավոր է առանց պատի-ժը կրելու՝ ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառմամբ պատիժը պայմանականորեն չկիրառելու: միջոցով, ինչն անհրաժեշտ ու բավարար է նաև սոցիալական արդարությունը վե-րականգնելու և նրա կողմից նոր հանցագործությունների կատարումը կանխելու համար:

Դատարանը, անդրադառնալով ՀՀ քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածի 1-ին մասի սանկցիայով նախատեսված գույքի բռնագրավման հարցին, հաշվի առնելով, որ նշված սանկ-ցիայի համաձայն՝ որպես լրացուցիչ պատիժ, պետք է նշանակվի ՀՀ քրեական օրենսգրքի

55-րդ հոդվածի չորրորդ մասով նախատեսված գույքի բռնագրավում, սակայն փաստելով, որ ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի համաձայն՝ ազատազրկման ձևով պատիժը պայմանակա-նորեն չկիրառելիս կարող են նշանակվել լրացուցիչ պատիժներ« բացի գույքի բռնագրավումից, գտնում է, որ ամբաստանյալի նկատմամբ պետք է նշանակվի ՀՀ քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածի 1-ին մասի սանկցիայով նախատեսված գույքի բռնագրավումը, նկատի ունենալով, որ ՀՀ քրեական օրենսգրքի 55-րդ հոդվածի առաջին մասով նախատեսված գույքի բռնագրավումը դատապարտյալի սեփականությունը համարվող գույքի կամ դրա մի մասի հարկադրաբար և անհատույց վերցնելն է՝ ի սեփականություն պետության, մինչդեռ՝ նույն հոդվածի չորրորդ մաս-ով նախատեսված գույքի բռնագրավումը հանցավոր ճանապարհով ստացված գույքի« այդ թվում՝ հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման և նույն օրենսգրքի 190-րդ հոդվածով նախատեսված արարքների կատարման արդյունքում ուղղակի կամ անուղ-ղակի առաջացած կամ ձեռք բերված գույքի... բռնագրավումն է, այսինքն՝ ՀՀ քրեական օրենս-գրքի 70-րդ հոդվածում նշված գույքի բռնագրավումը վերաբերվում է միայն դատապարտյալի սեփականությունը համարվող գույքի կամ դրա մի մասի հարկադրաբար և անհատույց վերցնել-լուն՝ ի սեփականություն պետության:

Քննության առնելով իրեղեն ապացույցների տնօրինման հարցը՝ դատարանը գտնում է, որ էլեկտրոնային ավիատոմսերը, վճարման հավաստագրերը, հետգանձումային պահանջի մա-սին շտապ հարցումները, «Բիբլոս բանկ Արմենիա» և «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲ ընկերու-թյուններից առգրավված մուտքի օրդերներն ու փոխանցում կատարելու մասին դիմումները պետք է պահել քրեական գործի հետ միասին:

Դատարանը, քննության առնելով խափանման միջոցի հարցը, գտնում է, որ ամբաս-տանյալի նկատմամբ կիրառված խափանման

միջոցը պետք է թողնվի անփոփոխ՝ մինչև դա-տավճռի օրինական ուժի մեջ մտնելը:

Վերոգրյալների հիման վրա և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 119, 357, 359, 360 ու 3753 հոդվածներով՝ դատարանը

Վ Ճ Ռ Ե Ց

Անժելա Քամարային ճանաչել մեղավոր ՀՀ քրեական օրենսգրքի 181-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով, 184-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ կետերով ու 190-րդ հոդվածի 1-ին մասով և ՀՀ քրեական օրենսգրքի 181-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով նրան դատապարտել ազատազրկման 3 (երեք) տարի ժամկետով, 184-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով՝ ազատազրկման 1 (մեկ) տարի 6 (վեց) ամիս ժամկետով, իսկ 190-րդ հոդվածի 1-ին մասով՝ ազատազրկման 3 (երեք) տարի ժամկետով՝ հանցավոր ճանապարհով ձեռք բերված գույքի՝ 237.453 (երկու հարյուր երեսունյոթ հազար չորս հարյուր հիսուներեք) դրամի բռնագրավմամբ:

ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պատիժները մասնակի-որեն գումարելու միջոցով, որպես վերջնական պատիժ՝ նշանակել ազատազրկում 6 (վեց) տարի ժամկետով՝ 237.453 (երկու հարյուր երեսունյոթ հազար չորս հարյուր հիսուներեք) դրամի բռնագրավմամբ՝ այն տարածելով նաև «Բիբլոս բանկ Արմենիա» ՓԲ ընկերությունում Ա.Քամարայի ունեցած հաշվեհամարում առկա գումարների վրա:

ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառմամբ Ա.Քամարայի նկատմամբ ազատա-զրկման ձևով նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառել և սահմանել փորձաշրջան 3 (երեք) տարի ժամկետով:

Իրեղեն ապացույցները՝ էլեկտրոնային ավիատոմսերը, վճարման հավաստագրերը, հետ-գանձումային պահանջի մասին շտապ հարցումները, «Բիբլոս բանկ Արմենիա» և «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲ ընկերություններից առգրավված մուտքի օրդերներն ու փոխանցում կատարելու մասին դիմումները պահել քրեական գործի հետ միասին:

Ա.Քամարայի նկատմամբ կիրառված խափանման միջոցը՝ ստորագրություն՝ չհեռանա-լու մասին, թողնել անփոփոխ՝ մինչև դատավճռի օրինական ուժի մեջ մտնելը:

Դատավճիռը կարող է բողոքարկվել ՀՀ քրեական վերաքննիչ դատարան՝ հրապարակ-վելու օրվանից հետո՝ մեկամսյա ժամկետում:

ԴԱՏԱՎՈՐ՝ Գ.ՊՈՂՈՍՅԱՆ

Դատական ակտի ամսաթիվը: 14-06-2012

Այլ նշումներ: